Հայկուհի Պետրոսյան
Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ

ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃՅԱՆԸ ԽՄԲԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Հայկական տպագրության սկզբնավորումը նոր փուլ նախանշեց և անգնահատելի դեր ունեցավ մշակույթի զարգացման բնագավառում: Կարևոր և անհրաժեշտ իրողություն էր նաև լրագրությունը: XIX դարի առաջին կեսին այս ասպարեզում հատկապես մեծ է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, բանասեր, բանաստեղծ, պատմաբան, աշխարհագետ, ազգագրագետ, լրագրող-խմբագիր Ղուկաս Ինճիճյանի վաստակը:

Ղուկաս Ինճիճյանը ծնվել է Կ. Պոլսում 1758 թ. մարտի 21-ին: Նրա մեծ հայրը ադիրանապոլսեցի Ինճիճի Հաջի Միքայելն էր, իսկ հայրը՝ Ինճիճի Պողոս Միքայելյանը: Մայրը՝ Տիրուհին, պատմաբան Միքայել Չամչյանի քույրն էր[1]: 1770 թ., երբ Ղուկասն ընդամենը 12 տարեկան էր, հայրը նրան ուղարկում է Վենետիկի Մխիթարյան միաբանություն, ուր արդեն գտնվում էին իր երկու քեռորդիները՝ Հակոբ և Միքայել Չամչյանները[2]: Այնտեղ նա աշակերտում է միաբանության աբբահայր Ստեփանոս Ագոնց Գուվերին: Ինճիճյանը 1779 թ. ձեռնադրվում է քահանա[3]: 1786 թ. վերջերին վերադառնում է Կ. Պոլիս, որտեղ մնում է չորս տարի՝ զբաղվելով ուսուցչությամբ: 1790 թ. կրկին վերադառնում է Վենետիկ: 1805 թ. մարտին բուժման և աշխարհագրական որոշ վայրեր աչքի անցկացնելու նպատակով դարձյալ տեղափոխվում է Կ. Պոլիս: 1828 թ. սկզբներին, երբ Կ. Պոլսի կաթոլիկ հայերն Անկարայից աքսորվեցին, Ինճիճյանն էլ, Կ. Պոլսում մնալը վտանգավոր համարելով, նույն տարվա մայիսին վերադառնում է Վենետիկ: Այստեղ մեկ տարի առաջ մահացած Գաբրիել Ավետիքյանի փոխարեն ընտրվում է միաբանության փոխառաջնորդ՝ պաշտոնավարելով մինչև մահը: Մահացել է 1833 թ. հուլիսի 2-ին:

Մեծ է Ղուկաս Ինճիճյանի թողած ժառանգությունը: Նա հեղինակել է բազմաժանր և բազմազան աշխատություններ, բայց իր հասարակական-գաղափարական մտորումներն ավելի բացահայտ արտահայտել է իր հիմնադրած պարբերականներում: Նա ոչ միայն խմբագրել է այդ պարբերականների մեջ զետեղված նյութերը, այլև ինքն էլ կազմել ու շարադրել է թե՛ խմբագրականները, թե՛ ակնարկները և թե՛ մյուս նյութերը: Ինճիճյանը ժամանակին կապեր է հաստատել իր ծանոթ պոլսահայ ամիրաների հետ, օժանդակել Արշարունյաց ընկերության կազմակերպման գործին: Նա չի սահմանափակվել միայն հայագիտական ստվարածավալ հատորներ հրատարակելով: Զանալով առաջին հերթին գրավել աշխարհիկ ընթերցողների ուշադրությունը՝ իր մի շարք գործերի և մանավանդ պարբերականների մեջ ամփոփված նյութերը շարադրել է աշխարհաբար և դյուրամատչելի հայերեն լեզվով: Ղուկաս Ինճիճյանը XIX դարի առաջին տասնամյակին հանդես է եկել «Տարեգրութիւն», «Եղանակ Բյուզանդեան» պարբերականների խմբագրի դերում: Արշարունյաց ընկերության «Դի-

---

[1] Տե՛ս «Մխիթարեան Յոբելեան»,1701-1901, Վենետիկ, 1901, էջ 95:
[2] Տե՛ս **Ալան Հովհաննէս**, Մխիթարեանք գրականութեան հանդէպ, Վենետիկ, 1902, էջ 46:
[3] Տե՛ս **Մեսրոպ վարդապետ Ճանաշեան**, Պատմութիւն արդի հայ գրականութեան, հ. Ա, Վենետիկ, 1953, էջ 45:

տակ Բյուզանդեան» հանդեսը հիմնադրվել է Ինճիճյանի անմիջական մասնակցությամբ:

«Ազդարարից» հետո «Տարեգրութիւն»-ը երկրորդ պարբերականն էր հայ իրականության մեջ և առաջինը՝ աշխարհաբար լեզվով: Ինչպես նշում է Գարեգին Լևոնյանը, «Վենետիկեան տարեգրի լեզուն բաւականին մատչելի էր թէ՛ բարձր, թէ՛ ռամիկ ժողովրդի ընթերցանութեան»[1]: Այն տպագրվում էր Վենետիկի Սբ. Ղազար վանքի տպարանում: Տպագրվել է 1800-1802 թթ.: Հրապարակված երեք հատորների հոդվածներն ու նյութերը շարահյուսել է Ինճիճյանը: «Տարեգրութեան» կառուցվածքը միանգամից չի ձևավորվել. առաջին «տետրակը» համեստ մի գրքույկ էր՝ բաղկացած 46 էջից, իսկ երկրորդ և երրորդ տարվա «տետրակները» ավելի ծավալուն էին[2]: Պարբերականի բոլոր նյութերը տպագրվում էին առանց որևէ ստորագրության: Ուսումնասիրողները «Տարեգրութեանը» նվիրել են շատ անորոշ ու հակիրճ տողեր: Օրինակ, Գ. Զարբհանալյանը իր «Հայկական մատենագրություն» աշխատության մեջ չի հիշատակել նույնիսկ «Տարեգրութեան» խմբագրի ազգանունը[3], իսկ Գ. Գալեմքեարյանը իր «Լրագրության պատմության» մեջ գրում է, որ ժամանակին Մխիթարյան միաբանության հրատարակությունների մի հին ցանկում իբրև «Տարեգրութեան» խմբագիր (հորինող) նշվել է Ղուկաս Ինճիճյանը, իսկ ինքն իր աշխատության մեջ այդ պարբերականի մեջ ամփոփված ակնարկների և նյութերի բնութագրմանը հատկացրել է միայն երեք էջ[4]: «Տարեգրութիւն»-ը հրատարակվում էր տարվա վերջում և յուրաքանչյուր առանձին հատորի մեջ զետեղվում էին նախորդ տարվա ընթացքում կատարված դեպքերի, հատկապես քաղաքական, եկեղեցական, մշակութային նորությունների նկարագրությանը նվիրված ակնարկները: Հետաքրքիր է հատկապես այն նյութերի ուսումնասիրությունը, որոնք առաջին հայացքից պարզունակ լինելով՝ հնարավորություն են տալիս որոշ պատկերացում կազմել թե «Տարեգրութեան» խմբագրի մտայնության և թե հին օրերի հայ ընթերցողների մտավոր պահանջների, ուրույն ճաշակի, մտապաշարի և հայեցության մասին: «Տարեգրութեան» մեջ տպագրված «Ծրագրում» նշվում է, որ պարբերական տարեգրքի մեջ անհրաժեշտ է համառոտ կերպով հիշատակել թագավորների անունները, տերությունների փոփոխությունները, արվեստի, գիտության, գյուտերի, վաճառականության մասին տեղեկությունները: Հետաքրքիր են հատկապես զանազան պետությունների տիրակալների մասին կենսագրական տվյալները: Սրանցում խմբագիրը հատկապես ջանում է ընդգծել միապետության նշանակությունը, թագավորների դրական դերը, նրանց անսահման զորությունը: Նշում է նաև կառավարությունների փոխհարաբերությունները բացահայտող պայմանագրերի մասին: Գաղութային պատերազմների և տերությունների մղած դաժան քաղաքականության մասին ոչ մի քննադատական խոսք չի ասում, այլ միշտ սահմանափակվում է բռնության փաստերի պարզ արձանագրությամբ: Ինճիճյանը հետևում էր օրվա թեմաներին, հաշվի էր առնում աշխարհիկ, մասնավորապես վաճառական ընթերցողների պահանջները, նկարագրում այդ

[1] **Լևոնյան Գ.**, Հայոց պարբերական մամուլը, Ալեքսանդրապոլ, 1895, էջ 8:
[2] Տե՛ս **Անանյան Գ.**, Մխիթարյանների «Տարեգրություն» (1800-1803) պարբերականը, տե՛ս «Բազմավեպ», 2001, № 1-4, էջ 100:
[3] Տե՛ս **Կարինյան Ա. Բ.**, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. Բ, Երևան, 1960, էջ 102:
[4] Տե՛ս **Գալեմքեարյան**, Պատմություն հայ լրագրության, Վիեննա, 1893, էջ 25-27:

ընթերցողներին հետաքրքրող դեպքերը: Ինճիճյանը օգտագործել է բազմազան աղբյուրներ՝ փորձելով ներկայացնել ճշմարտությունը իր ընթերցողներին[1]:

«Վաճառականություն» հատվածի մեջ «Տարեգրութեան» խմբագիրը կանգ է առնում գաղութային պետությունների տնտեսական բախումների վրա: Շատ հետաքրքրքրական են հատկապես քարավանային ուղիների կազմակերպման մասին ուշագրավ նկարագրությունները: Հավանաբար այդ նկարագրությունները կազմելու ժամանակ Ինճիճյանը հաշվի է առել նաև վաճառականների դիտողությունները[2]: Զանազան պետությունների նավերի, ծովահենների, ապրանքային շրջանառության և այլնի մասին տրված հակիրճ տեղեկությունները, իհարկե, նկատի ունեին ամենից առաջ հայ վաճառական-ընթերցողներին: Եվ ինչպես նշում է խմբագիրը «...Արվեստից մեջ ամենեն շահավոր է վաճառականությունը...աս արվեստը ընդհանուր է, ամեն ազգ կբանեցնե ու կշահի, թագավորներն ալ սա արվեստեն կշահին տուրք ու կյոմրյուք առնելով: Բայց ծեծի ատեն էն առջի դադրողը արվեստներուն մեջ աս արվեստն է»[3]:

Շատ հակիրճ է «Արվեստք» հատվածը, ուր հակիրճ ձևով նշվում է, որ «Ինկիլդեռռան» (Անգլիան) կոչվում է «արվեստների աշխարհ»: Ինճիճյանը նաև հաղորդում է, որ ֆրանսիացիները շատ «վարպետ բաներ» են Իտալիայից զավթել ու տարել: Խոսքը իտալական վարպետների վրձնած կտավների մասին էր[4] :

«Գյուտք» հատվածի մեջ Ինճիճյանը կանգ է առնում գյուտերի վրա: Նա հիշատակում է թուղթ պատրաստողների գյուտարարությունը, կտավը ճերմակեցնողների մեթոդը, նոր ձևի ժամացույցների գյուտը և այլն:

Հատուկ հատվածի մեջ հիշատակվում են բնական պատահարները, երկրաշարժը, կարկուտը:

«Տարեգրութեան» մեջ խմբագիրը անդրադառնում է Արևմտյան Եվրոպայի կրոնական զանազան հաստատություններին: Ձանալով ընդգծել կաթոլիկ եկեղեցու հզորությունը՝ Ինճիճյանը «Դիպուածք» հատվածի մեջ կանգ է առնում կաթոլիկության առանձին հետևողների վրա և նկարագրում է հատկապես Հռոմի կղերապետի թագադրման հանդեսը:

Իր «Տարեգրութեան» մեջ Ինճիճյանը առանձին բաժին է հատկացրել աշխարհագրությանը, աստղաբաշխությանը, բժշկությանը և բնաբանությանը:

Վերջաբանում լավատեսությամբ ներկայացված են գալիք տարեշրջանի խընդիրները. «...Ամառը ոչ չոր, ոչ այնչափ տաք. Գետնի բարիքը աղեկ պիտ ըլլա. աշունը խիստ աղեկ. պտուղները մանավանդ ետքի խաղողը՝ առատ: Տիրող աստղը աս տարվան ոմանք կըսեն Փայլածուն, ոմանք Լուսընթագը»[5]:

Սխեմատիկ լինելով հանդերձ՝ այդ հանդեսը նշանակալից գրական-պատմական վավերագիր է: Ամեն ինչ կարող էր գտնել հնօրյա հայ ընթերցողը փոքրիկ այդ տարեգրքի մեջ: Հարցերը առաջադրվում էին այնքան հմուտ կերպով, որ անգամ կաթոլիկ պրոպագանդիստներին բացասաբար մոտեցող հայ ընթերցողներին թելադ-

[1] Տե՛ս **Անանյան Գ.**, նշվ. աշխ., էջ 102:
[2] Տե՛ս **Կարինյան Ա. Բ.**, նշվ. աշխ., էջ 107:
[3] «Տարեգրություն 1800 տարվույն, որ է հիշատակարան քաղաքական, պատերազմական և բանասիրական անձից և դիպվածոց աշխարհի», Վենետիկ, 1801, էջ 66:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 47-48:
[5] «Տարեգրություն», Վենետիկ, 1801, էջ 67:

ռում էր դրական գնահատել աշխարհաբար դյուրամատչելի այդ ժողովածուն կազմող հեղինակների վաստակը:

1803-1820 թթ. Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ լույս է տեսնում նաև «Եղանակ Բյուզանդեան-Բազմավէպ» պարբերականը: Կարելի է ասել, որ այն «Տարեգրութեան» տրամաբանական շարունակությունն էր, քանի որ միայն փոխված էր ձևը, իսկ խմբագիրը, քաղաքը, տպարանը և, որ ամենակարևորն է, ծրագիրն ու նպատակը նույնն էին՝ լուսավորության տարածումը: Լեզուն դարձյալ աշխարհաբարն էր:

«Եղանակ Բյուզանդեանը» հրատարակվում էր յուրաքանչյուր տարվա սկզբում՝ ներառելով հետևյալ բաժինները. ա. Նոր տարի-նոր գիտելիք, բարոյական խորհրդածութիւններ, բ. Պատմութիւն օդերեւութականաց-բժշկական և բնական այլ և այլ տեղեկութիւններ, գ. Գուշակութիւն օդերեւոյթ փոփոխութեանց. այս բաժնի մեջ ներկայացվում էին յուրաքանչյուր ամսվա օրն ու բնության երևույթների գուշակությունները, դ. Զբօսարան ուսմանց-գիտնական հատվածներ, նաև քաղաքական դեպքեր ու իրադարձություններ, բանասիրական, ուսումնական, արվեստագիտական և եկեղեցական, պատմական հոդվածներ, սովորույթներ և այլն[1]:

Մխիթարյան միաբանության հանձնարարությամբ «Եղանակ Բյուզանդեան» պարբերականի ղեկավարությունը ստանձնեց Ղուկաս Ինճիճյանը, քանի որ նա մեծ հեղինակություն էր վայելում թե՛ միաբանության այրերի և թե՛ արևմտահայ ամիրաների շրջանում: Բացի այդ հեշտությամբ կարող էր կարգավորել պարբերականի հրատարակության գործը: Ուշագրավ են հատկապես «Եղանակ»-ի մեջ զետեղված պատկերները. XIX դարի սկզբին ոչ մի հայերեն հանդես իր նյութերով չէր կարող մրցել «Եղանակ»-ի մեջ զետեղված ընտիր պատկերների հետ: Յուրաքանչյուր առանձին գրքի մեջ ամսեամիս տպագրված նկարներին կցված էին ուրույն առակներ, հիմնականում՝ կենցաղագրական:

Շատ հետաքրքիր են հատկապես «Եղանակ»-ում զետեղված «օրացույցները», որոնց մեջ առավել հաճախ նկարագրվում և նշվում են բնական երևույթները, արձանագրվում են նաև առօրյա հայ քաղաքացու և, առաջին հերթին, օսմանյան Թուրքիայի մայրաքաղաքում ապրող հայ քաղաքացիներին հետաքրքրող առօրյա դեպքերն ու փաստերը:

Նկատելի տեղ են գրավում «Եղանակ»-ի մեջ նաև օդերևութական, բժշկական, բնական գիտելիքների մասին հայտնած տեղեկությունները: Սնոտիապաշտությունների դեմ ծառացող Ինճիճյանը ինքն էլ հաճախ որոշ տուրք է տալիս աստղաբանական հնօրյա ավանդույթներին. «...Այս տարվա գլխավոր տիրողը Արուսյակն է, որ արևուն շրջանը պտտելով՝ լուսնին խոնավությունը կբարեխառնե. Անով կպատճառի եղանակին փոփոխական ըլլալը...»[2]:

«Եղանակ»-ի մեջ կան տեղեկություններ արևմտյան երկրների բռնատիրական քաղաքականության, եվրոպական երկրների ծովեզրյա և գետեզրյա վաճառականների, միաբանության, բնության և կրթության նշանակության մասին: Պարբերականի մեջ հատուկ տեղ է հատկացված ոչ միայն եկեղեցու հայտնի գործիչների, այլ նաև եկեղեցու դեմ ըմբոստացող հերետիկոսների և «սուտ մարգարեների» մասին:

[1] Տե՛ս Լեռնյան Գ., նշվ. աշխ., էջ 10:
[2] «Եղանակ Բյուզանդեան», Վենետիկ, 1813, էջ 27:

Ինճիճյանը դատողություններ է անում եկեղեցական ծեսերի, ջրհեղեղի, Նոյ Նահապետի մասին:

Նշանակալից է այն, որ գրելով աշխարհաբար՝ Ինճիճյանը միաժամանակ հրահանգում է իր ընթերցողներին ուսումնասիրել գրաբար լեզուն և հին գրականությունը: Դա է պատճառը, որ «Եղանակ»-ի մեջ հանդիպում ենք նաև գրաբար հատվածների. «Որչափ աղէկ սեպենք Ստանպօլին օդը ու ջուրը, բայց յատուկ ստանպօլցին երկար չապրիր. հասարակօրէն 60 տարին կը հասնի, քիչ կայ 70ը անցնօղ, աւելի քիչ 90ը անցնօղ: Ձմեռը քէօմիւրի կրակի սաստիկ գործածութիւնը ու ետքը քալելը՝ իրենց շատին կը բերէ նէվազիլի ու իջուածներու զանազան ցաւեր...»[1]: «Եղանակ Բյուզանդեան» հանդեսի ընդհանուր կառուցվածքը տարիների ընթացքում մնում է միանման:

1815 թ. սկսած «Եղանակ Բյուզանդեան» հանդեսի ծախսերը իր վրա է վերցնում «Արշարունեաց ընկերութիւնը»[2] :

Ինչպես արդեն նշել ենք. Ինճիճյանը մասնակցություն է ունեցել «Արշարունեաց ընկերութեան» կազմակերպմանը: Ընկերությունը հիմնադրել է Հովհաննես Չելեպի Տյուզյանը 1812 թվականին[3]: Ընկերության ստեղծմանը աջակցել են նաև Հակոբ և Մկրտիչ Տյուզյանները, իսկ Ղուկաս Ինճիճյանը կարգվել է ընկերության «խնամակալ և հոգաբարձու»[4]: Ընկերությունը նպատակ է ունեցել ազգի մեջ ընթերցանություն տարածել՝ հրատարակելով զանազան գրքեր և լրագրեր: Եվ հենց 1812-1816 թթ. ընթացքում, երբ գոյություն ուներ ընկերությունը, հրատարակվել է «Դիտակ Բյուզանդեան» երկշաբաթաթերթը: Թեպետ Ինճիճյանը չի համարվել երկշաբաթաթերթի անմիջական խմբագիրը, այնուամենայնիվ զգալի մասնակցություն է ունեցել այս գործին: Իր գոյության առաջին իսկ տարում «Դիտակ Բյուզանդեան» հանդեսն ունեցել է 1500-3000 բաժանորդ,[5] և նրա առաջին հատորների մուտքը մեծ ոգևորություն է առաջացրել Կ. Պոլսում՝ արդարացնելով կազմակերպիչների հույսերը:

Ամփոփելով՝ նշենք, որ Ղուկաս Ինճիճյանի թողած բազմաժանր ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում նրա հիմնած և խմբագրած պարբերականները: Նրան իրավամբ կարելի է համարել աշխարհաբար լրագրության հայրն ու առաջին խմբագիրը: Մխիթարյան միաբանության անդամը շնորհիվ իր հեռատեսության հասկացավ, որ ապագան աշխարհաբարինն է: Անշուշտ, հայ պարբերական մամուլի պատմության մեջ բարձր է գնահատվում Ղուկաս Ինճիճյանի վաստակը և, ինչպես նշում է Գ. Անանյանը, Ղուկաս Ինճիճյանի պարբերականները հայոց տեղեկատվության դաշտում ազդարարում ու տարեգրում էին սկզբունքներ, որոնք ավանդություն էին դառնալու հետագա շրջանի հայ մամուլի համար[6]:

Айкуи Петросян, Гукас Инчичян- редактор и издатель - В армянском книгопечатании первой половины XIX века велика роль филолога, поэта, историка, географа, этнографа, журналиста,

[1] Գալեմքեարյան Գ., նշվ. աշխ., էջ 29:
[2] «Բազմավեպ», Վենետիկ, 1912, թիվ 3, էջ 105-106:
[3] Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հատ. Ա, Վենետիկ, 1957, էջ 279:
[4] Մեսրոպ վարդապետ Ճանաշեան, նշվ. աշխ., էջ 40:
[5] Սարգիսեան Հ., Երկհարիւրամեայ գրական գործունեութիւն և նշանաւոր գործիչներ Վենետիկոյ Մխիթարեան միաբանութեան, Վենետիկ, 1905, էջ 24-25:
[6] Տե՛ս Անանյան Գ., նույն տեղում, էջ 116:

члена Венецианской конгрегации Мхитарян Гукаса Инчичяна. Он оставил большое наследие, но его социально-идеологические мысли наиболее ярко отражены в издаваемой им периодике. Он не только редактировал материалы этих публикаций, но и сам был их автором. Под редакцией Гукаса Инчичяна выходят в свет периодические издания "Тарегрутюн" и "Еханак Бюзандян", которые были первыми в истории армянской периодики. Благодаря этим изданиям читатель того времени мог иметь представление о политических, религиозных, культурных, географических, медицинских и других новостях.

Haykuhi Petrosyan,Ghukas Inchichyan, the editor and publisher - In the first half of the 19th century, Mechitarist Congregation member, philologist, poet, historian, geographer, ethnographer, journalist and editor Ghukas Inchichyan had a great labour in the sphere of Armenian printing. He left a great legacy being the author of various works. However his social and ideological thoughts were better expressed in his established periodicals. He not only edited the materials placed in those periodicals, but also composed and stated the editorials and other materials. «Taregrutyun» and «Eghanak Byuzandean» periodicals were edited and published by Ghukas Inchichyan, which were the first in the history of Armenian periodicals. Due to these periodicals Armenian reader could have an idea of political, religious, cultural, geographic, medical and other news of that time.